ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

- **Գործուղված անձ**

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ, վիճակագրական կոմիտեի նախագահի տեղակալ՝ Գ. Գևորգյան

- **Երկիր/քաղաք/ ժամկետ**

Շվեյցարիա /Ժնև / 04 – 06.12.2019թ.

- **Նպատակը**

ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (ԵՏՀ) կողմից կազմակերպված.

- Աշխատաժողով (04.12.2019թ.)՝ «Աղքատության վիճակագրության ներդաշնակեցումը Կայուն զարգացման նպատակների (ԿԶՆ) 1-ին ցուցանիշի չափման համար» թեմայով.

- Փորձագիտական խմբի հանդիպում (05-06.12.2019թ.)՝ «Աղքատության և անհավասարության չափումը ԿԶՆ 1 և ԿԶՆ 10 նպատակների ցուցանիշների չափման համար» թեմայով:

- **Քննարկված թեմաները**

Աշխատաժողովի և փորձագիտական հանդիպման շրջանակում հիմնականում քննարկվել են հետևյալ թեմաները.

1. ԿԶՆ 1. «Վերջ աղքատությանը» չափման ուղղությամբ երկրների արձանագրած առաջընթացը.
2. Տվյալների առկայությունը Աղքատության ցուցանիշների հետ կապված գլոբալ ԿԶՆ-ների տվյալների շտեմարանում.
3. Տվյալների հավաքման ներդաշնակեցումը աղքատության վերաբերյալ տնային տնտեսությունների հետազոտություններում.
4. Աղքատության ցուցանիշները կայուն զարգացման 2030 օրակարգի մշտադիտարկման համատեքստում.
5. Հետազոտությանը բնակչության մասնակցության և պատասխանելիության մակարդակի բարձրացումը և ընտրանքի ճշգրտումը.
6. Ակտիվների վրա հիմնված աղքատությունը և անհավասարությունը.
7. Բնեղեն սոցիալական փոխանցումների (տրանսֆերտների) ներգրավումը, բնակարանային հարստությունը և վարձակալությունը՝ աղքատության չափման համատեքստում.
8. Տվյալների հավաքագրման գործընթացում անհասանելի, դժվար հասանելի և պոտենցիալ անապահով բնակչության խմբերի ներառումը.
9. Անհատի մակարդակով աղքատության մակարդակի չափումը, կենսապահովման արժեքի և սուբյեկտիվ աղքատության տարբերությունների դերը:

Աշխատաժողոի նպատակն էր աղքատության չափման հնարավորինս ներդաշնակեցման նպատակով ԱՊՀ անդամ երկրների միջև մասնագիտական փորձի փոխանակումը և վիճակագրական կարողությունների ստեղծումը՝ հստակեցնելով աղքատության վիճակագրության ներդաշնակեցմանն ուղղված հետագա քայլերի հիմնական ուղղությունները:

Փորձագիտական խմբի հանդիպման նպատակն էր մասնակից երկրների միջև տարածել և փոխանակել աղքատության չափման հետ կապված մարտահրավերների և դրանց լուծմանն ուղված

Փորձագիտական խմբի հանդիպման նպատակն էր մասնակից երկրների միջև տարածել և փոխանակել աղքատության չափման հետ կապված մարտահրավերների և դրանց լուծմանն ուղված միջոցառումների փորձը, ջանքերը համախմբել կատարելագործելու աղքատության և անհավասարության չափման մեթոդաբանությունը, բարձրացնելու աղքատության վիճակագրության համադրելիության և ցուցանիշների հուսալիության մակարդակը, ամրապնդելու երկրների բազմակողմ համագործակցությունը:

Փորձագիտական խմբի հանդիպման շրջանակում քննարկվեցին ոլորտին առնչվող այժմեական մի շարք խնդիրներ, որոնք կարիք ունեն լրացուցիչ պարզաբանումների, միջազգային ստանդարտների վերանայման, ընդհուպ մինչև՝ ժամանակի հրամայականին համահունչ արդիականացման՝ ի նպաստ երկրների կողմից փաստերի վրա հիմնված, կենսունակ սոցիալ-տնտեսական քաղաքականության մշակման: Հանդիպման շրջանակում քննարկվեց նաև Աղքատության մանրամասնեցված վիճակագրության արտադրության գծով աշխատանքային խմբի կողմից իրականացված միջոցառումների շրջանակում ձեռք բերված առաջընթացը:

- **Արդյունքները**

Աշխատաժողովն օգտակար էր հստակեցնելու աղքատության վիճակագրության ներդաշնակեցմանը՝ առանձնապես ԿԶՆ 1. նպատակի ներքո ցուցանիշների հաշվարկման բարելավմանը միտված հետագա ուղղությունները, որի շրջանակում անմիջականորեն քննարկեցին կիրառական նշանակություն ունեցող կարևորագույն հարցեր:

Փորձագիտական խմբի երկօրյա հանդիպումը ոչ միայն հնարավորություն ընձեռեց ամփոփել փորձագիտական խմբերի գործունեության արդյունքները, այլ նաև ապահովեց մասնակիցների իրազեկվածությունն աղքատության վիճակագրության գործիքակազմի ու մեթոդների, միջազգային ստանդարտների, դասակարգումների, ցուցանիշների շրջանակի վերջին և ակնկալվող վերանայումների վերաբերյալ:

Փորձագիտական հանդիպումն աղքատության չափման նորօրյա մարտահրավերների և դրանց լուծման ուղիների վերաբերյալ երկրների միջև փորձի փոխանակման հաջողված հարթակ էր: Նպատակն էր առաջ մղել աղքատության և անհավասարության չափման մեթոդաբանության բարելավման և արդիականացման աշխատանքները, բարելավել աղքատության վիճակագրության համադրելիությունն ու հուսալիությունը, ինչպես նաև ամրապնդել երկրների և շահառու կազմակերպությունների միջև բազմակողմանի համագործակցությունը:

- **Նշումներ**

Աշխատաժողովին և փորձագիտական խմբի աշխատանքներին մասնակցում էին վիճակագրական ազգային գրասենյակներից, վիճակագիրներ և վերլուծաբաններ՝ աղքատության վիճակագրություն արտադրող այլ պետական գերատեսչություններից:

Այցելության ծախսերը ֆինանսավորվել է ՄԱԿ-ի Զարգացման հաշվի (United Nations Development Account) կողմից:

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ,
վիճակագրական կոմիտեի նախագահի տեղակալ Գ. Գևորգյան